գեցնում են 3122, 6416, 6537, 6546, 6547, 6582, 6593 թվահամարները։ Այս 7 ձեռագրերից 4-ը (№№ 6416, 6546, 6547, 6593) դեռևս անցյալ դարի 70-ական թթ. նվիրաբերված են եղել Լազարյան Հեմարանին և նկարագրված են Հեմարանի 1888 թ. ապագիր ցուցակում (համապատասխանաբար №№ 1218, 1247, 1220, 1250)[8]. դրանք Մատենադարան են մուտք գործել 1923 թվականին՝ Լազարյան Հեմարանի հավաքածուի կազմում (№№ 39, 46, 47, 64)[9]։ Ինչ վերաբերում է մյուս երեք ձեռագրերին, ապա դրանցից առաջինը (№ 3122) 1855 թ. արդեն գտնվում էր էջմիածնում և արձանագրված է «Գեորգյան» կոչվող հավաքածուի գույքացուցակում (№ 635)[10], երկրորդը (№ 6537) Մատենադարան է հասել 1925 թ.՝ Մաերյանների արխիվի հետ, իսկ երրորդը (№ 6582), որ փոխանցված է եղել Քուչուկ-Հովհաննիսյանին, դարձյալ 1925 թ.՝ Լազարյան Հեմարանի ձեռագրերի շարքում (№ 209)[11]։

Այսպիսով, Մկրտիչ Էմինից մեզ հասնելի են 25 ձեռագրեր (Ա խմբից՝ 17, Բ խմբից՝ 1, շարժանագրված՝ 7), որոնցից առկա՝ 17, բացակա՝ 8։

Ռ. Ա. ԵԴԱՆՅԱՆ

## ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՐԿՈՒ ՀՈՒՇԱՐՁԱՆ ԿՈՂԲՈՒՄ

Կողբ (Կողբաքար) գյուղը (Հայկական ՍՍՀ Նոյեմբերյանի շրջանում) հնում եղել է Գուգարաց նահանգի Կողբափոր գավառի վարչական կենտրոնը։ Գտնվելով Դվինից Թիֆլիս տանող ճանապարհի վրա[1], Կողբը վաղ միջնադարում հասել է զարգացման բարձր աստիճանի։ Այն հիշվում է դեռևս Մովսես Խորենացու մոտ[2]։ Որպես աչքի ընկնող բնակավայր տեղ է գտել VII դարի հայկական և IX դարի վրաց աղբյուրներում[3]։ 387 թ. մտել է վրաց պետության կազմի մեջ մինչև IX դարը[4]։ Աղբյուրներում հիշատակվում է «մեծ ավան», «քաղաքագյուղ», «բերդավան» անվանումներով։

Կողբի տարածքը հարուստ է պատմական տարբեր դարաշրջաններին վերաբերող նյութական մշակույթի բազմապիսի հուշարձաններով։

Հուշարձաններից մեկը, որ գյուղի բնակիչները կոչում են «Տվարաեղցի», գրեթե անծանոթ է մասնագիտական գրականությանը։ Դրա վերաբերյալ չկան հնագիտական նյութեր, պատմական, մատենագրական տեղեկություններ։ Եկեղեցու մասին հիշատակության հանդիպում ենք Մ. Բարխուդարյանցի մոտ[5]։

Եկեղեցու մնացորդները գտնվում են Կողբ գյուղից մոտ 4 կմ հարավ-արևմուտք՝ նույնպես «Տվարաեղցի» կոչվող հին գյուղատեղի շրջանում։ Նրա շուրջը հին գերեզմանոց է։ Հյուսիսային կողմից ճանապարհի շինարարության կապակցությամբ բացվել են քարարկղային թաղումներ։

Հուշարձանը կիսավեր վիճակում է (աղ. I, 1)։ Կանգուն է արևելյան պատը (աբսիդի գմբեթարդի զգալի մասով)։ Մյուս կողմերում պատերի մնացորդները պահպանվել են 2,5—5 մ բարձրությամբ, որոնք երբեմնի գոյություն ունեցած դռների շրջանում ավելի շատ են քանդված (դա վերաբերում է հատկապես հարավային պատին)։

Աղոթասրահն ունի 1092×1970 սմ չափեր (աղ. II, 1)։ Արևմտյան պատին, ինչպես նաև աբսիդի հյուսիսային կողմի ճակատային մասում պահպանված որմնամույթերի հետքերից պարզ է, որ աղոթասրահը զույգ սյունաշարերով բաժանված է եղել երեք նավերի՝ 150, 585 և 217 սմ լայնություններով։

Երկայնական պատերի վրա որմնամույթերի հետքեր չկան։ Մույթերի մնացորդներ նույնպես չեն պահպանվել. աղոթասրահը ծածկված է հողի հաստ շերտով։ Այստեղ հազիվ նկատվող թմբերից կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր շարքում պետք է եղած լինեին երեքական մույթեր։ Այդ ճշգրտելու, ինչպես նաև

---

8 Каталог книг и рукописей библиотек Лазаревского института..., М, 1888, էջ 69—81։

9 Մատենադարանի Անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, № 11։

1 Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 413։

2 Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 138։

3 Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 59։

4 Տե՛ս նույն տեղում, էջ 60։

10 Նույն տեղում, № 4ա։

1։ Նույն տեղում, № 11։

5 Տե՛ս Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 387։

որոշ մանրամասնություններ պարզելու նպատակով անհրաժեշտ էր բացել հենարանների գոնե մի մասը։ Հյուսիսային շարքի արևմտյան որմնամույթի և դրան հաջորդող մույթի շրջանում, մոտ 50 սմ խորության վրա, հողաշերտի տակից երևան եկան որմնամույթի և մույթի



Աղ. I.

(աղ. I, 2) ուղղանկյուն կտրվածքով հիմքերը՝ 85×105 և 170×110 սմ չափերով, իրարից 320 սմ հեռավորության վրա[6], շարված դեղնականաչավուն ֆելզիտի խոշոր, կոպտատաշ կտորներից՝ կրաշաղախով կապակցված։ Պատի և որմնամույթի հիմքերի քարերը փոխշաղկապված են, որը, ինչպես նաև որմնամույթերից պահպանված քարերի կապը պատի շարվածքի հետ, ցույց են տալիս, որ որմնամույթերը (հետևապես և մույթերը) նախապես գոյություն են ունեցել։

Հենարանների չափերը և ձևը վերականգնելու հարցում հիմքերից բացի օգնում են նաև պահպանված որմնամույթերի հետքերը՝ մոտ 70 սմ լայնությամբ, և ամենայն հավանականությամբ որմնամույթերից մեկի խարիսխը հանդիսացած, ներկայումս աղոթասրահի մեջտեղում գտնվող սալաքարը (72×67×35 սմ չափերով)։ Այն երկու կողմից եզերված է բազմաշարք պարզ տրամատի ակոսներով (աղ. I, 3)՝ նման Քասաղի բազիլիկի որմնամույթերի խարիսխների ակոսներին (քարի քայքայված լինելու հետևանքով ճակատային կողմից ակոսների հետքերը նկատելի չեն)։ Դրանք ցույց են տալիս, որ հենարանները վերգետնյա մասում հիմքերի համեմատ եղել են ավելի փոքր չափերի՝ հիմքերի յուրաքանչյուր կողմից մոտ 20 սմ ներս ընկած, այսինքն՝ 65×70 և 130×70 սմ։

Հենարանները հատակագծում տեղադրելով իրենց չափերին և իրարից ունեցած հեռավորություններին համապատասխան, ստացվում է, որ Կողբի եկեղեցու յուրաքանչյուր հենարանային շարքում եղել է երեքական մույթ, ինչպես Քասաղի, Աշտարակի բազիլիկներում (ի դեպ, Կողբի եկեղեցին դրանց համապատասխանում է նաև աղոթասրահի համաչափություններով)։

Միջին նավը արևելյան կողմում ավարտվում է կիսաշրջանագծային արսիդով, որի կենտրոնը ճակատային մասից ետ է ընկած մոտ 1,5 մ։ Արսիդին հարավային կողմից կից է ուղղանկյունի (341×280 սմ) ավանդատունը, որը կազմում է եզրային նավի շարունակությունը և օրգանապես կապված է եկեղեցուն։ Ավանդատան երկայնական պատերում կան սիմետրիկ դասավորությամբ չորսական ոչ մեծ չափի պատուհաններ։ Հյուսիսային կողմից ավանդատուն չկա։ Այդ կողմում պատի եզրագիծը 348×175 սմ չափերով անկյունաձև ներս է ընկած։

Արսիդը լուսավորվել է 60×150 սմ բաց-

6 Հողային աշխատանքների ժամանակ գտնվեցին նաև կղմինդրների, վաղ շրջանին հատուկ քանդակների բեկորներ։

վածքով պատուհանից, որը, ինչպես ընդունված է առավել վաղ շրջանի հուշարձաններում, դեպի ներս չի լայնանում, չունի պսակ կամ պարակալ։ Ավանդատան արևելյան պատում նույնպես եղել է պատուհան, որի եզրամասերը ամբողջ շրջագծով քանդված են։ Մյուս պատերի վրա պատուհանների հետքեր չկան։ Հարավային պատին կից պահպանվել է ավանդատան լայնական պատի մնացորդը, որը որոշակի է դարձնում ավանդատան երկարությունը, ինչպես նաև արսիդի ճակատային պատի սահմանը։




Աղ. II.

Հարավային, հյուսիսային և արևմտյան պատերի մնացորդների ողջ բարձրությունը բռնող բացվածքներից պետք է ենթադրել, որ դռները եղել են երեքը։ Եթե արևմտյան մուտքը գտնվել է միջին նավի առանցքի վրա, ապա մյուսները, հավանաբար, տեղադրված լինելով իրար հանդեպ, աղոթասրահի միջին մասից զգալիորեն շեղված են դեպի արևմուտք։ Դրանք չեն համընկնում նաև միջհենարանային լայնական առանցքի հետ։

Աբսիդի պայտաձևությունը հատակագծում նկատելի չէ։ Իսկ գմբեթարդը, որ նստած է պարզ տրամատով գոտու վրա, ուղղաձիգ հարթության մեջ ունի շեշտված պայտաձևություն։ Նրա վերին մասում հավասար հեռավորությունների վրա կան խոռոչներ՝ հավանաբար բացված հետագայում։

Ավանդատան հյուսիսային պատը, որ միաժամանակ աբսիդի պատն է, պահպանվել է գմբեթարդի գրեթե ողջ բարձրությամբ, և վրան թաղի հետքեր նկատելի չեն։ Այդ պարագան, ինչպես նաև այն, որ աղոթասրահի ներսում ևս կամարների կամ թաղերի գոյությունը մատնանշող հետքեր չկան, հիմք են տալիս ենթադրելու, որ եկեղեցին եղել է փայտածածկ՝ հայկական վաղ միջնադարյան բազիլիկ շատ հուշարձանների նման, որոնց մի մասը (Աշտարակ, Եղվարդ և այլն) հետագայում վերակառուցվել է, դարձվելով թաղածածկ։

Եկեղեցին անպաճույճ է։ Հարդարանքի միակ տարրը շրջանագծային պսակ ունեցող պարզ գծագրությամբ հավասարաթև խաչն է (վաղ միջնադարյան հուշարձաններում շատ տարածված)՝ պատկերված աբսիդի պատուհանի հյուսիսային անկյունաքարերից մեկի վրա (աղ. I, 4, II, 2)։

Պատերի ստորին կեսը շարված է մանր կոպտատաշ ավազաքարից, իսկ վերին կեսը, ինչպես դրսից, այնպես էլ ներսից, երեսպատված է եղել դեղնականաչավուն ֆելզիտի սրբատաշ խոշոր քարերով, որոնք ներկայումս ամենուրեք (բացի աբսիդի կիսաշրջանագծային մասից) հանված են։ Դրանից երևում է, որ հուշարձանը ինչ-որ ժամանակ ենթարկվել է վերակառուցման, և նրա վերին կեսը նախնական վիճակով չէ։ Այդ հարցում որոշ պարզություն են մտցնում արևելյան պատի արձանագրությունները։ Աբսիդի պատուհանի հյուսիսային անկյունաքարերից մեկի վրա (խաչի պատկերով քարի տակ փորագրված է. Սամվեւ գրեց յաղոթս յիշեէ (աղ. I, 4, II, 2)։ Պատուհանի հարավային անկյունաքարի վրա, արձանագրված քարի դիմաց, մանր, շեղ գրերով փորագրված է. ի թվականս Հայոց չ։է (=1258)։ Շատ հավանական է, որ այդ թվականը վերաբերում է Սամվել-ի արձանագրության փորագրման ժամանակին։ Իսկ ի՞նչ կապ կարող է ունենալ արձանագրության մեջ հիշվող Սամվել-ը եկեղեցու հետ։

Նշված արձանագրություններով քարերը տեղադրված են պատերի վերակառուցված մասի սահմանագծում7։ Պետք է կարծել, որ հենց Սամվել-ն է եղել եկեղեցու 1258 թ. վերակառուցողը։ Այդ թվականին վերակառուցման կամ

7 Հավասարաթև խաչի գոյությունը արձանագրված քարից վերև, պատի խորությամբ պատուհանի բացվածքի հաստատուն լայնու-

վերականգնման անհրաժեշտություն առաջացած կարող էր լինել թերևս 1219 թ. երկրաշարժի հետևանքով[8]։

Հայկական մյուս եռանավ դահլիճների համեմատ Կողբի հուշարձանն ունի որոշ առանձնահատկություններ.

ա. եթե մյուս եռանավ հուշարձանները (գրեթե բոլորը) երկայնական առանցքի նկատմամբ ունեն սիմետրիկ լուծում (վերաբերում է աղոթասրահի և արևելյան թևի հորինվածքներին), ապա Կողբի հուշարձանում ինչպես աղոթասրահը, այնպես էլ արևելյան թևը լուծված են ոչ սիմետրիկ։

բ. Եկեղեցին չի անցել վերակառուցումների և հավելումների այն բարդ ընթացքով (փայտե ծածկի փոխարինում քարե թաղով, ավանդատների, արտաքին սրահների, գմբեթային սիստեմի հավելում և այլն), որը հատկանշական է մյուս եռանավ հուշարձանների համար (Քասաղ, Տեկոր, Դվին, Աշտարակ, Եղվարդ և այլն)[9]։ Նրա սկզբնական հորինվածքը մնացել է համեմատաբար անաղարտ, որի խաթարումը վերաբերում է թերևս միայն պատերի կեսից վեր գտնվող մասի վերակառուցմանը։

Եկեղեցու կառուցման ժամանակը կոնկրետացնող տվյալներ չկան։ Հուշարձանի հորինվածքային և կոնստրուկտիվ մի շարք տարրեր և բնորոշ գծեր (շրջանագծի մեջ առնված հավասարաթև խաչը, աբսիդի պատուհանի եզրերի ուղիղ կտրվածքը, որմնամույթի խարիսխի պարզ տրամատի ակոսները, փայտե ծածկը, հյուսիսային կողմից ավանդատան բացակայությունը և այլն) փաստում են հուշարձանի VI դարից վաղ կառուցված լինելը։

Հայկական վաղ միջնադարյան պաշտամունքային շենքերի հիմնական տեսակներից մեկը հանդիսացող եռանավ դահլիճները բավականաչափ ուսումնասիրված չեն։ Մասնագիտական գրականության մեջ դեռևս մի քանի տասնամյակ առաջ շրջանառության մեջ դրված այդ տիպի հուշարձանների անվանացանկը (Քասաղ, Տեկոր, Դվին, Երերույք, Եղվարդ, Աշտարակ, Ծիծեռնավանք), բացառությամբ Աղցի, փաստորեն չի համալրվել նորերով։ Այդ հուշարձանները, բացի Ծիծեռնավանքից, գտնվում են Հայաստանի կենտրոնական շրջաններում (Արարատ, Շիրակ)։ Կողբի «Տվարաեղցի» եկեղեցին, նման հուշարձանների անվանացանկը ընդլայնելուց բացի, իր հերթին հավաստում է, որ այդ նշանավոր տիպը, դուրս գալով առանձին ճարտարապետական դպրոցների շրջանակից, հատուկ է եղել վաղ միջնադարյան հայկական ճարտարապետությանն ընդհանրապես։

Կողբի մյուս հուշարձանի՝ գյուղամիջի եկեղեցու վերաբերյալ որոշ տեղեկություններ կան հայկական միջնադարյան արվեստին նվիրված աշխատություններում[10]։ Հուշարձանը հայտնի է դարձել իր աչքի ընկնող քանդակներով, ավելի ճիշտ՝ քանդակների մնացորդներով, որոնք ի հայտ են եկել պատահականորեն կամ մասնակի պեղումների շնորհիվ։

Եկեղեցին գտնվել է Կողբ գյուղի ներկայիս կենտրոնական հրապարակից մոտ 300 մ դեպի հյուսիս-արևմուտք ընկած բարձրադիր մասում՝ Տիգրան Աբովյանի (Ճուղուրանց) տնամերձ հողամասում, որտեղ այժմ նրա բակը և օժանդակ շինություններն են։

Եկեղեցին մեր ժամանակներն էր հասել այնպիսի վիճակով, որ միայն մանրամասն ու ծավալուն պեղումների շնորհիվ կարելի կլիներ պարզել նրա հորինվածքի հետ կապված խնդիրները։ Ցավոք, այն նման պեղման չի ենթարկվել, իսկ ներկայումս դրա հնարավորությունը փաստորեն անդառնալիորեն վերացել է։

Հուշարձանի պեղման աշխատանքներին 1939—40 թթ. ձեռնամուխ է եղել ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի այդ տարիների աշխատակից Հ. Եղիազարյանը, որը վերահաս պատերազմի հետևանքով հնարավորություն չի ունեցել աշխատանքները մինչև վերջ հասցնելու։ Պեղումների արդյունքների վերաբերյալ հրապարակված հոդվածում[11], առաջնայնորեն կատարված է ի հայտ եկած քանդակների և հնագիտական նյութերի արժեքավորում։ Հուշարձանի հատակագծային

---

թյունը ասում են այն մասին, որ պատուհանի ներկայիս անկյունաքարերը եղել են հենց ակզբից, որոնց վրա XIII դարում փորագրվել են արձանագրությունները։

8 Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 142։

9 Տե՛ս Ա. Ա. Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955, էջ 119—124։

10 Տե՛ս Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Գ, Նյու Յորք, 1944, էջ 72—78։ Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV—VII դարերում, Երևան, 1949, էջ 60։

11 Տե՛ս Հ. Եղիազարյան, Կողբ գյուղի հնագույն տաճարի պեղումները, «Էջմիածին», 1963, Գ, էջ 50—57։

և ծավալատարածական լուծումը փաստորեն մնացել է մասնագիտական շրջաններին անհայտ։

Տեսնենք, թե ինչ են տալիս 1939—1940 թթ. պեղումների նյութերը[12] եկեղեցու հորինվածքի վերաբերյալ։




Աղ. III.

Եկեղեցու մնացորդները ծածկող 1,5—2 մ հաստությամբ հողի շերտի հեռացումով բացվել են եկեղեցու հարավային պատը, հարավային կողմի արտաքին սրահը և արևելյան կողմից վերջինիս կից ավանդատունը՝ աբսիդի մնացորդով (աղ. III, 1, լցված մասը)։ Պարզվում է, որ պատերից մնացել է խարիսխից վերև ընդամենը 1—2 շարք, որոնք արտաքինից շարված են կաթնագույն սրբատաշ ֆելզիտի խոշոր քարերով, իսկ ներսից՝ մանր կոպտատաշ քարերով՝ կրաշաղախով կապակցված։ Հուշարձանը ներքուստ եղել է սվաղված և որմնանկարներով պատած, որոնցից հայտնաբերվել են առանձին մնացորդներ։ Բացվել են նաև մեծ թվով քանդակազարդ քարեր, խաչքարերի, կոթողների բեկորներ, կղմինդրների (սալաձև և կիսաշրջանագծային), աղյուսների, գիպսե քանդակների ձուլածո կտորներ, տապանաքարեր և այլն (դրանց մի մասը տեղափոխվել է Սանահինի վանքի այդ ժամանակ նորարաց թանգարանը, որտեղ և պահվում է այժմ)։

Քանդակները բազմաբնույթ են. պատկերաքանդակներ, բուսական, երկրաչափական մոտիվներով զարդաքանդակներ, հավասարաթեև խաչեր և այլն, որոնք աչքի են ընկնում զեղարվեստական արտահայտչականությամբ և կատարման վարպետությամբ։ Սյունաձև կոթողների, քանդակազարդ սալաքարերի մի մասի, տապանաքարերի վրա եղել են հիշատակագրության պատառիկներ (նաև վրացերեն՝ խուցուրի գրերով), իսկ աղյուսների կտորների վրա՝ կենդանիների և թռչունների հարթաքանդակների, որմնանկարների մնացորդներ։

Եթե քանդակների մի մասն անտարակույս վերաբերում է եկեղեցուն, ապա բազմաթիվ այլ բեկորներ՝ կոթողների, խաչքարերի, թևավոր խաչերի մասեր, անհավանական է, որ եկեղեցուն պատկանած լինեին (նկատենք, որ եկեղեցին, ներսից շարված լինելով կոպտատաշ մանր քարերով, ի սկզբանե նախատեսված է եղել սվաղով ծածկելու համար, հանգամանք, որը կբացառեր կամ կսահմանափակեր ներսում քանդակների գոյությունը)։

Արտաքին սրահի հարավային պատի ուղղությամբ բացվել են սյան և որմնասյան մեկական խարիսխներ՝ իրենց տեղում գրված, որոնց պատի հետ ունեցած փոխադարձ դասավորությունից երևում է, որ սրահը ունեցել է 2 կա-

[12] Պահվում են ՀՍՍՀ Պետշինի հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության արխիվում (գործ №№ 371, 372)։

մարային բացվածք՝ 173 սմ չափի[13]։ Գտնվել են նաև կամարի 3 քարեր (այդ թվում՝ փականային), սյան գլանաձև բնի կտոր (65 սմ տրամագծով) և այլն։ Սրահը եղել է թաղակապ, որից պահպանվել են գոգավոր սրբատաշ քարեր։ Հատակի խոշոր սրբատաշ սալերն են բացվել աբսիդի առջևի մասում։ Սրահը, բացի կամարային զույգ բացվածքներից, մուտքեր է ունեցել հյուսիսային և արևմտյան կողմերից՝ համապատասխանաբար 1,55 և 1,20 մ բացվածքներով։

Եկեղեցու հուշարձանային բնութագրում (կազմված 1950 թ.) հորինվածքի վերաբերյալ նշված է. «Եռանավ բազիլիկ, ներսում 4 մույթեր, արևելյան կողմում աբսիդը՝ երկու կողմից ավանդատներով, հյուսիսային և հարավային կողմերից ունի որահ»[14]։

Նկատենք, որ պեղումների արդյունքները ներսում 4 մույթերի առկայության (իմա աղոթասրահի եռանավության) վերաբերյալ ոչինչ չեն տալիս։

Հուշարձանի պեղումներով բացված հարավային թևի հորինվածքը (աղ. III, 1) համադրելով Կողբափորին հարևան Տաշիրի սրահավոր միանավ դահլիճներին (վերջիններս աղոթասրահին կից ունեն երկայնական զույգ թևեր, որոնցից առնվազն մեկը իր հորինվածքով նույնանում է Կողբում բացվածի հետ, աղ. III, 2—Կուրթան, 3—Գյուլագարակ, 4—Հոբարձի, 5—Ջգրաշեն, 6—Սվերդլովի Ս. Գեվորգ)[15], որոշակի է դառնում, որ Կողբի հուշարձանը ևս աղոթասրահին կից ունեցել է հյուսիսային թև[16]։

Կողբի գյուղամիջի եկեղեցում արտաքին սրահը չի եղերել աղոթասրահը երեք կողմից, ինչպես Տաշիրի միանավ դահլիճներում։ Այստեղ արտաքին սրահի թևերը աղոթասրահի հետ արևմտյան կողմից սահմանափակված են եղել նույն հարթության մեջ գտնվող պատով, ինչպես Կարնուտի, Գառնիի, Քասաղի, նաև վրացական Բոլնիսի, Քվեմո Բոլնիսի բազիլիկներում։ Պեղված մասի համաչափություններից (եկեղեցու երկարություն, հարավային թևի լայնություն), ինչպես նաև հայկական ճարտարապետության մեջ թևերի նույնանման հորինվածք ունեցող հուշարձանների համանմանությունից պետք է ենթադրել, որ աղոթասրահը եղել է ոչ թե եռանավ, այլ միանավ. եռանավի դեպքում եկեղեցին կստանար խիստ անբնական համաչափություններ լայնական չափը կանցներ երկայնականից, ինչը հատուկ չէ հայկական հուշարձաններին։ Վաղ միջնադարյան եռանավ դահլիճներից ոչ մեկը չունի արևելյան թևի նման հորինվածք՝ այսինքն բեմին մեկ կամ երկու կողմից կից երկայնական ձգված ավանդատներ՝ լայն աբսիդներով, որոնք աղոթասրահի հետ հաղորդակցվում են անմիջականորեն բեմի առջևից բացվող դռնով (Տեկորի, Երերույքի, Դվինի եկեղեցիներում բեմին կից ավանդատները ձգված են լայնական ուղղությամբ, մուտքերը բացվում են դեպի եզրային նավերը և աբսիդներ չունեն)։

Փաստորեն որոշակի չի դառնում միայն աղոթասրահի լայնությունը, որը ներկայացված հատակագծում ընտրված է այդ տիպի մյուս հուշարձանների (Հոբարձի, Ջգրաշեն, Գյուլագարակ և այլն) համամասնությամբ։ Ստացվում է, որ Կողբի եկեղեցին ունեցել է մոտավորապես 19,6×15,5 մ արտաքին չափեր։

Գոգավոր սրբատաշ քարերի, որմնամույթի խոյակի, կղմինդրների առկայությունը, ինչպես նաև պատերի զգալի թանձրությունները հիմք են տալիս ենթադրելու, որ աղոթասրահը եղել է թաղածածկ՝ կոշտացված որմնամույթերի վրա հանգչող ենթաթաղային կամարներով, ունեցել է կղմինդրով ծածկված երկթեք տանիք։

Գտնված քանդակների քննությամբ պարզված է, որ դրանք սերտ ընդհանրություն ունեն վաղ շրջանի հայկական քանդակագործական արվեստի նմուշների (Երերույք, Դվին, Օձուն և այլն) հետ, որը թույլ է տվել սահմանել նաև եկեղեցու կառուցման ժամանակը՝ VI դարից ոչ ուշ[17]։ Այսպիսի թվագրման հիմնավորման հարցում, բացի քանդակներից, կարևոր են նաև հուշարձանի հատակագծային առանձնահատկությունները (արտաքին սրահի, բաց աբսիդի

---

13 Հմմտ. վրացական Ջեգանի եկեղեցու հատակագծի հետ, տե՛ս В. В. Беридзе. Грузинская архитектура «раннехристианского» времени (IV—VII вв.), Тбилиси, 1974, նկ. 2։

14 Տե՛ս Հայկական ՍՍՀ Պետշինի հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության արխիվ, № 600։

15 Տաշիրի հուշարձանների հատակագծերը վերցված են Մ. Մ. Հասրաթյանի «Տաշիրի Սրահավոր միանավ հուշարձանները» հոդվածից (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 3, նկ. 7)։

16 Ներկայացված գծագրում երկայնական թեվերի սիմետրիկ դասավորությունը կարող է լինել հավանական տարբերակը, թեպետ չի բացառվում մասնակի շեղումների հնարավորությունը, ասենք՝ արտաքին սրահի հյուսիսային թևում աբսիդի բացակայություն, կամարային բացվածքների քանակի փոփոխություն և այլն։

17 Տե՛ս Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 78։ Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 60։

առկայություն և այլն), հորինվածքային ընդհանրությունը Տաշիրի V—VI դդ. միանավ դահլիճների հետ։

Կողբի գյուղամիջի եկեղեցու արևելյան թևի հորինվածքը որոշ նմանություն ունի հայկական առավել վաղ շրջանի միանավ դահլիճների (Կարնուտ, Թանահատ և այլն) հորինվածքին, որոնց ավանդատունը միայն մի կողմից է, չունի շեշտված երկայնական ձգվածություն և արսիդ։ Դա պետք է բացատրել նրանով, որ Կողբի եկեղեցին, ինչպես նաև Տաշիրի հիշված նույնատիպ հուշարձանները, պայմանավորում են միանավ դահլիճների տիպի զարգացման հաջորդ փուլը։

Ճարտարապետության թեկնածու
Դ. Ս. ՇԱԽԿՅԱՆ

## ՀՈՌՈՄԱՅՐԻ ՎԵՐԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԱԼՈՒՄԸ

Օձուն գյուղի հարավային կողմում կանգնած են երկու հուշարձանախումբ։ Մեկը գտնվում է ժայռի վերին հարթակի եզրին և տեղադրություններ համապատասխան կոչվում է Զորաեզրի վանք, մյուսը՝ նրանից ներքև է, ձորի յանջին և գրականության մեջ հայտնի է Հոռոմայր վանք անունով։ Սակայն վիմագրական սկզբնաղբյուրներից դատելով շինությունների Զորաեզրի խումբը կառուցվել է Հոռոմայրի միաբանների նախաձեռնությամբ ու թեև կանգնած է մասնակիորեն մեկուսի, այնուհանդերձ համարվել է Հոռոմայր վանքի բաղկացուցիչ մասը։ Ներկա վիճակով Զորաեզրի կոչված վանքը կազմված է երկու եկեղեցիներից ու գավթից։ Շենքերի սիմետրիկ դասավորությունը նախագծային որոշակի մտահղացման արդյունք է։ Կենտրոնում գտնվում է հավասարակողմ փոքրիկ գավիթը, որը հարավային և հյուսիսային կողմերից հաղորդակից է երկու նույնաձավալ միանավ թաղածածկ եկեղեցիներին։

Գավիթը առավելապես ուշագրավ է իր կամարային առանձնահատկություններով։

Ներսի չորս անկյունները հատված են որմնամույթերով, որի շնորհիվ ներքին տարածությունը հատակագծում դարձել է ութանկյունիս։ Հիշյալ որմնամույթերից դեպի վեր անկյունագծով ձգվում են երկու կամարներ և խաչվում առաստաղի ուղիղ կենտրոնում։ Խաչվող կամարների համակարգն առանձնապես մեծ տարածում ուներ Հայաստանի XIII դարի հարտարապետության մեջ (Խորակերտ, Մշկավանք, Հաղբատ, Գանձասար, Գեղմնուտ, Նոր Վարագավանք, Անիի Առաքելոց եկեղեցու հարավային գավիթը, Աղթամար[2], Զորագիր և այլն)[3], ի տարբերություն նշված հուշարձանների, Հոռոմայրի գավիթը ավելի պարզ շինություն է. երկու զույգ կամարների փոխարեն, շենքի փոքրության պատճառով ունի միայն մեկը։ Այս հանգամանքն էլ առաջ է բերել չափազանց ինքնատիպ լուծում՝ կամարների անկյունագծային տեղադրությամբ (Նկ. 1)։

Արևմտյան մուտքը բավական մեծ է և պատուհանների բացակայության պայմաններում, բուն էության, ծառայում է նաև ներսի լուսավորմանը։ Թեև շինությունների վերնամասերն ավերվել են, սակայն պահպանված հատվածներից պարզ երևում է, որ եկեղեցիները գավթից ավելի բարձր են եղել։ Ներկայումս գոյություն ունի միայն հարավային եկեղեցու տանիքը։ Տեղ-տեղ քանդվել և բացվել է գավթի վերնամասը, իսկ հյուսիսային եկեղեցու տանիքը լրիվ ավերված է։

Ճարտարապետական ձևերի պարզությանը

---

1 Ս. Ջալալյանցը վանքի երկու հատվածները տարբեր անուններով չի կոչում և նշում է միայն տեղադրություններ (տե՛ս «Ճանապարհորդություն ի Մեծ Հայաստան», Ա, 1842, Թիֆլիս, էջ 92)։ Ի. Հարությունյանն արդեն տարբերում է, ընդ որում ձորի գլխի խումբն անվանում է Հոռոմայր վանք, իսկ ներքինը՝ Ս. Նշան (տե՛ս «Աշակերտի հուշատետրը», «Լումա», գիրք Ա, Թիֆլիս, 1897, էջ 275)։ Հ. Եղիազարյանն ըստ տեղադրության դրանք անվանում է Զորամիջի և Զորաեզրի (տե՛ս «Ալավերդու շրջանի կուլտուրայի հուշարձանները», Երևան, 1952, էջ 35—36)։

2 Արծրունիների պալատի վերակազմության համաձայն, որ կատարել է Հ. Օրբելին, խաչվող կամարների հետագայ համակարգը հայ ճարտարապետության մեջ պետք է թվագրվի X դարով (տե՛ս «Избранные труды», т. 1, М., 1968, էջ 43, 45, 47—60)։

3 С. Х. Мнацаканян. Архитектура армянских притворов. Ереван, 1952, էջ 77—779։